# ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐՈՂՆԵՐԻ ՃԱԿԱՏՈՒՄ

## ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԴԻՄՈՒՄԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱԿՏ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արձագանքելով ամբողջ աշխարհի միլիոնավոր մարդկանց ձգտումներին, ինչպիսին էլ որ լինի նրանց կարծիքը համաշխարհային պատերազմի վտանգ առաջացնող պատճառների մասին,

հանուն խաղաղության ամրապնդման և միջազգային անվտանգության ապահովման,

մենք պահանջում ենք խաղաղության Պակտի կնքում հինգ մեծ տերությունների՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների, Սովետական Միության, Չինական ժողովրդական Ռեսպուբլիկայի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև:

Մենք խաղաղության Պակտ կնքելու նպատակով հանդիպելուց մեծ տերությունների որևէ մեկի կառավարության հրաժարվելը կդիտենք որպես այդ կառավարության ագրեսիվ դիտավորությունների վկայություն:

Մենք բոլոր խաղաղասեր երկրներին կոչ ենք անում պաշտպանել խաղաղության Պակտ կնքելու վերաբերյալ պահանջը, Պակտ, որը բաց լինի բոլոր պետությունների համար:

Մենք դնում ենք մեր ստորագրությունները այդ Դիմումի տակ և կոչ ենք անում այն ստորագրելու բարի կամքի բոլոր մարդկանց, բոլոր կազմակերպություններին, որոնք ձգտում են խաղաղության ամրապնդմանը:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

## ՀԻՆԳ ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱԿՏ ԿՆՔԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՏԱԿ ՍՍՌՄ-ՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՊԼԵՆՈՒՄԻ ԲԱՆԱՁԵՎԸ

Խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեն միահամուռ կերպով պաշտպանում է հինգ մեծ տերությունների՝ ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի, Չինաստանի և ՍՍՌՄ-ի միջև խաղաղության Պակտ կնքելու վերաբերյալ խաղաղության Համաշխարհային Խորհրդի Դիմումը:

Այդ Դիմումը, որն արտահայտում է բոլոր երկրների խաղաղասեր ժողովուրդների կամքն ու ցանկությունները, ջերմ հավանությամբ է դիմավորվել սովետական մարդկանց կողմից, որոնք շահագրգռված են կայուն և երկարատև խաղաղությամբ և պատրաստ են մինչև վերջ պաշտպանել խաղաղության և ժողովուրդների բարեկամության արդար գործը:

Նոր պատերազմի աճող սպառնալիքը բոլոր երկրների ժողովուրդների ավելի ու ավելի լայն մասսաների է ոտքի հանում վճռական պայքարի՝ հանուն խաղաղության պահպանման:

Աշխարհի բոլոր երկրներում խաղաղության Համաշխարհային Խորհրդի Դիմումի տակ արդեն հավաքված մոտ 450.000.000 ստորագրությունները վկայում են ժողովուրդների անսասան կամքի մասին՝ կանխելու պատերազմը և պաշտպանելու խաղաղության գործն ամբողջ աշխարհում:

Խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի պլենումը անհրաժեշտ է համարում 1951 թ. սեպտեմբերին Սովետական Միությունում սկսել ստորագրությունների հավաքումը մեծ տերությունների միջև խաղաղության Պակտ կնքելու վերաբերյալ խաղաղության Համաշխարհային Խորհրդի Դիմումի տակ և կոչ է անում բոլոր սովետական մարդկանց՝ իրենց ստորագրությունները դնել այդ Դիմումի տակ:

Խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեն հաստատ համոզմունք է հայտնում, որ բոլոր սովետական մարդիկ կարձագանքեն այդ կոչին և դրանով իսկ մեկ անգամ ևս կհաստատեն իրենց պատրաստակամությունը՝ Լենինի—Ստալինի պարտիայի ղեկավարությամբ բոլոր ուժերով պաշտպանել խաղաղության և ժողովուրդների անվտանգության գործը, կրկին անգամ կցուցադրեն իրենց անձնուրաց նվիրվածությունը խաղաղության մեծ դրոշակակիր ընկեր Ստալինին:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻՆ

### ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Խաղաղության պաշտպանության կոնֆերանսի բացումն Հայաստանում ի խորոց սրտի ողջունում ենք: Ողջունում ենք նաև խաղաղության պաշտպանության Խորհրդի որոշումը՝ հինգ մեծ պետությունների միջև խաղաղության Դաշինք կնքելու, ինչպես նաև նրա Կոչն ուղղված աշխարհի բոլոր բարի կամքի տեր մարդկանց՝ ստորագրելու հիշյալ Կոչի տակ:

Տարիներե ի վեր խոշոր պայքար է գնում աշխարհում խաղաղության և պատերազմի կողմնակիցների միջև: Այդ պայքարը հակամարտություն է մի կողմից ֆիզիկական ուժի և բռնության, և մյուս կողմից՝ հումանիստական վսեմ գաղափարների: Մենք մեծ հույս և հավատ ունենք, որ մեծ Ստալինի հանճարեղ ղեկավարության շնորհիվ, հաջողությամբ կպսակվի այս խոշորագույն պայքարը՝ սկիզբ դնելով նոր դարաշրջանի, երբ ուժի և աշխարհակալական ոգու փոխարեն կտիրապետե խաղաղության, եղբայրության և համագործակցության ոգին, որով թե մեծ առաջնորդն և թե Խորհրդային Միու-

րյունը կարժանանա մարդկության համակրանքին և սիրուն և հավետ կանմահանան:

Հայ ժողովուրդը, որ իր ամբողջ կյանքում խաղաղություն է սիրել և խաղաղության գաղափարի մարտիկ է եղել, ինչպես և ռուս ժողովրդի անդավաճան բարեկամն ու նրա լավագույն ծրագիրների համար աջակից պայքարողը, հավատացած ենք, որ նույնպես կվարվի նաև այժմ, ուստի և կոչ ենք անում Խորհրդային Հայաստանում ապրող անխտիր բոլոր ժողովուրդներին և հատկապես հայ հավատացյալ ժողովրդին, նույնպես նաև Խորհրդային Միության սահմաններում ապրող հայության՝ դնել իրենց ստորագրությունները Խաղաղության պաշտպանության Համաշխարհային Խորհրդի Կոչի տակ՝ աջակցելով մարդկային կյանքի անվտանգությանն ու նրա ապագա երջանիկ կյանքին:

Հաջողություն ենք մաղթում Սովետական Միության ղեկավարությամբ տարվող խաղաղության պաշտպանության Համաշխարհային Խորհրդի խոշորագույն կոնֆերանսին:

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԳԵՈՐԳ Զ.

# ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ

(Կոնֆերանսի օրագրից)

*Սեպտեմբերի 12-ին, Երևանում, Հայֆիլհարմոնիայի ամառային թատրոնում տեղի ունեցավ խաղաղության կողմնակիցների Հայկական ռեսպուբլիկական կոնֆերանսը, մասնակցությամբ մտավորականության, արդյունաբերության, գյուղատնտեսության և այլ բնագավառների ներկայացուցիչների: Մայր Աթոռ Ս. Էջմիածնից մասնակցում էր Գերաշնորհ տեր Ռուբեն արքեպիսկոպոս Դրամբյանը:*

*Ներածական ճառով կոնֆերանսը բաց է անում կոնֆերանսի հրավիրման նախաձեռնող կոմիտեի անդամ՝ Պետական համալսարանի ռեկտոր Գ. Պետրոսյանը, շեշտելով խաղաղության պայքարը կազմակերպված անցկացնելու անհրաժեշտությունը և հայ ժողովրդի հաստատ կամքը՝ միահամուռ կերպով ստորագրելու Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Դիմումի տակ:*

*Նախագահության և քարտուղարության ընտրությունից հետո, կոնֆերանսը միաձայնությամբ ընդունում է հետևյալ օրակարգը՝ 1. Սովետական ժողովուրդը խաղաղության պահպանման և ամրապնդման համար մղվող պայքարում, 2. Խաղաղության պաշտպանության Հայկական ռեսպուբլիկական կոմիտեի ընտրություններ և 3. Խաղաղության կողմնակիցների Համամիութենական երրորդ կոնֆերանսի պատվիրակների ընտրություններ:*

*«Սովետական ժողովուրդը խաղաղության պահպանման և ամրապնդման համար մղվող պայքարում» զեկուցումով հանդես է գալիս գրող Նաիրի Զարյանը, շեշտելով այդ պայքարում սովետական ժողովրդի առաջապահ դերը և խաղաղության բանակի օրավուր աճը:*

*Իրար հետևից ամբիոն են բարձրանում պատվիրակները և խոսում այն ոգևորության մասին, որով հայ ժողովուրդը ընդունեց Խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի բանաձևը՝ Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Դիմումի տակ ՍՍՌՄ-ում ստորագրություններ հավաքելու մասին, աշխատանքային այն հաջողությունների մասին, որոնցով ռեսպուբլիկայի աշխատավորները ամրապնդում և պաշտպանում են խաղաղությունը:*

*Գրող Դ. Դեմիրճյանը իր ճառում նշում է, թե սովետական մարդիկ վստահ են իրենց ուժի վրա, նրանք խաղաղություն են ցանկանում ո՛չ այն պատճառով, որ թույլ են, այլ որպեսզի հնարավորություն ունենան է՛լ ավելի բարձրացնելու արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, գիտությունը, կուլտուրան, արվեստը:*

*Ապա ելույթ են ունենում Շամլուղի հան-*

քագործների պատվիրակ հորատող Հ. Գրիգորյանը, Էջմիածնի շրջանի կոլտնտեսականների պատվիրակ Ջ. Գրիգորյանը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Լ. Հովհաննիսյանը, վաստակավոր ուսուցչուհի Ս. Մարտիրոսյանը, Լենինականի աշխատավորների պատվիրակ վաստակավոր բժիշկ Գ. Մելիք-Գրիգորյանը և Ստալինյան մրցանակի լաուրեատ բանաստեղծ Գեորգ Էմինը, որն իր ճառն ավարտում է խաղաղության նվիրված իր բանաստեղծության ընթերցումով։

Ցերեկվա և երեկոյան նիստերում հանդես են գալիս բազմաթիվ պատվիրակներ, որոնք արտահայտում են ռեսպուբլիկայի աշխատավորության և մտավորականության միահամուռ կամքը խաղաղության պաշտպանության գործում։

Ցերեկվա նիստի ընթացքում կոնֆերանսը ողջունում են մայրաքաղաքի պիոներների և դպրոցականների ներկայացուցիչները, բերելով թարմ ծաղիկներ։ Երեխաների կողմից Շահումյանի անվան դպրոցի 7-րդ դասարանի աշակերտուհի Ծովինար Թորգոմյանն արտասանում է հետևյալ խոսքերը. «Մենք խնդրում ենք, մենք պահանջում ենք մեր հայրերից, մայրերից, ավագ քույրերից ու եղբայրներից, հանուն մեր երջանիկ մանկության և լուսավոր ապագայի, ստորագրել Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Դիմումի տակ»։ Դահլիճը ջերմ հավանությամբ է դիմավորում աշակերտուհուն։ Ապա երեխաները բաց են թողնում խաղաղության խորհրդանշան տասնյակ սպիտակ աղավնիներ և հեռանում պատվիրակների ծափերի որոտի մեջ։

Երեկոյան նիստի վերջում հրապարակվում են արտասահմանյան հայկական առաջադիմական կազմակերպություններից և անհատներից ստացված ողջույնի հեռագրերը։ Հեռագրեր են ստացվել Ռումինահայերի դեմոկրատական կոմիտեից, Ամերիկահայ առաջադիմական միությունից, Սոֆիայի «Երևան» առաջադիմական միությունից և ուրիշներից։ Նրանք արտահայտում են արտասահմանի առաջադիմական հայության միահամուռ կամքը խաղաղության պաշտպանության գործում Հայրենիքի իրենց հարազատ եղբայրների հետ։

Կոնֆերանսը միաձայնությամբ հավանություն է տալիս Խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի որոշմանը հինգ մեծ տերությունների միջև Խաղաղության Դաշինք կնքելու վերաբերյալ Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Դիմումի տակ ՍՍՌՄ-ում ստորագրությունների հավաքումը կազմակերպելու մասին և հատուկ բանաձևով կոչ է անում ռեսպուբլիկայի բնակչությանը՝ ստորագրել այդ Դիմումի տակ։ Բանաձևում ասվում է. «Խաղաղության կողմնակիցների Հայկական ռեսպուբլիկական կոնֆերանսը լիովին հավանություն է տալիս և միահամուռ կերպով պաշտպանում է Խաղաղության պաշտպանության Սովետական կոմիտեի պլենումի Բանաձևը՝ հինգ մեծ տերությունների միջև Խաղաղության Պակտ կնքելու վերաբերյալ Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Դիմումի տակ Սովետական Միությունում ստորագրություններ հավաքելու մասին։ Խաղաղության կողմնակիցների Հայկական ռեսպուբլիկական կոնֆերանսը կոչ է անում ռեսպուբլիկայի բոլոր աշխատավորներին՝ միահամուռ կերպով ստորագրել Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Դիմումի տակ, դրանով իսկ հայ ժողովրդի մեծ ավանդը դնել խաղաղության պաշտպանության ազնիվ գործի մեջ»։

Ապա, քննարկելով օրակարգի 2-րդ և 3-րդ կետերը, կոնֆերանսը միաձայն ընտրում է Խաղաղության պաշտպանության Հայկական ռեսպուբլիկական կոմիտե՝ բաղկացած 43 հոգուց, և Խաղաղության կողմնակիցների Համամիութենական երրորդ կոնֆերանսի պատվիրակություն՝ բաղկացած 20 հոգուց, որոնց մեջ ընտրվում է Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գևորգ Զ. Կաթողիկոսը։

Նիստից հետո Խաղաղության կողմնակիցների Հայկական ռեսպուբլիկական կոնֆերանսի պատվիրակները ստորագրում են Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Դիմումի տակ։

## ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ

Սեպտեմբերի 13-ին տեղի ունեցավ Խաղաղության Պաշտպանության Հայկական ռեսպուբլիկական կոմիտեի առաջին նիստը։

Խաղաղության պաշտպանության Հայկական ռեսպուբլիկական կոմիտեի նախագահ ընտրվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանը։ Կոմիտեի քարտուղար ընտրվեց Բ. Ա. Աստվածատրյանը։

Կոմիտեի նիստում նաև քննության առնը-

վեցին հինգ մեծ տերությունների միջև խաղաղության Պակտ կնքելու վերաբերյալ խաղաղության Համաշխարհային Խորհրդի Դիմումի տակ Հայկական ՍՍՌ-ում ստորագրությունների հավաքումը անցկացնելու հետ կապված հարցեր։

## ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

*Խաղաղության Պաշտպանության Սովետական կոմիտեն տվյալներ է ստացել հինգ մեծ տերությունների միջև խաղաղության Պակտ կնքելու վերաբերյալ խաղաղության Համաշխարհային Խորհրդի Դիմումի տակ սույն թվականի սեպտեմբերին ՍՍՌՄ-ում սկսված ստորագրությունների հավաքման կամպանիայի ընթացքի մասին։*

*Միութենական ռեսպուբլիկաներից, երկրամասերից և մարզերից ստացվող հաղորդումները ցույց են տալիս, որ Սովետական Միության բոլոր ժողովուրդները, մեր երկրի բնակչության բոլոր խավերը միահամուռ կերպով պաշտպանում են խաղաղության Պակտ կնքելու վերաբերյալ Դիմումը և լի են խաղաղության ու ժողովուրդների անվտանգության գործը պաշտպանելու վճռականությամբ։*

*Ներկայումս ստորագրությունների հավաքումը ծավալվել է երկրի բոլոր շրջաններում և ընդունել է լսկական համաժողովրդական բնույթ։*

*Խաղաղության պաշտպանության ռեսպուբլիկական, երկրամասային և մարզային կոմիտեներից խաղաղության Պաշտպանության Սովետական կոմիտեում ստացված տեղեկությունների համաձայն, կամպանիայի սկզբից մինչև սույն թվականի հոկտեմբերի 10-ը հինգ մեծ տերությունների միջև խաղաղության Պակտ կնքելու վերաբերյալ խաղաղության Համաշխարհային Խորհրդի Դիմումի տակ ստորագրել են 96.729.946 սովետական քաղաքացիներ։*

*Ստորագրությունների հավաքումը մեծ հաջողությամբ է անցնում մեր Հայրենիքի մայրաքաղաք Մոսկվայում, որտեղ Դիմումի տակ արդեն ստորագրել է 2.840.769 մարդ։ Դիմումի տակ Լենինգրադում իրենց ստորագրություններն են դրել 1.465.075 մարդ, ՌՍՖՍՌ-ում՝ 51.778.465 մարդ, Ուկրաինական ՍՍՌ-ում՝ 18.617,592 մարդ, Բելոռուսական ՍՍՌ-ում՝ 4.569.800 մարդ, Ուզբեկական ՍՍՌ-ում՝ 2.868.393 մարդ, Ղազախական ՍՍՌ-ում՝ 2.501.107 մարդ, Վրացական ՍՍՌ-ում՝ 2.181.061 մարդ, Ադրբեջանական ՍՍՌ-ում՝ 1.579.799 մարդ, Լիտվական ՍՍՌ-ում՝ 1.465.747 մարդ, Մոլդավական ՍՍՌ-ում՝ 1.321.790 մարդ, Լատվիական ՍՍՌ-ում՝ 1.239.418 մարդ, Կիրգիզական ՍՍՌ-ում՝ 717.563 մարդ, Տաջիկական ՍՍՌ-ում՝ 656.490 մարդ, Հայկական ՍՍՌ-ում՝ 800.795 մարդ, Թուրքմենական ՍՍՌ-ում՝ 399.184 մարդ, Էստոնական ՍՍՌ-ում՝ 621.567 մարդ, Կարելո-Ֆիննական ՍՍՌ-ում՝ 239.427 մարդ։*

*Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Դիմումի տակ ստորագրությունների հավաքման կամպանիան ՍՍՌՄ-ում անցնում է քաղաքական և աշխատանքային վիթխարի վերելքի իրադրության մեջ և նպաստում է մեր երկրի աշխատավորներին է՛լ ավելի մոբիլիզացնելու սովետական պետության՝ որպես ամբողջ աշխարհում խաղաղության պատվարի, հետագա ամրապնդման համար։*

## 562 ՄԻԼԻՈՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱԿՏ ԿՆՔԵԼՈՒ ԴԻՄՈՒՄԻ ՏԱԿ

### ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

*ՊՐԱԳԱ, 29 հոկտեմբերի (ՏԱՍՍ).— Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Քարտուղարությունը այսօր հրապարակել է հաղորդագրություն, որի մեջ ասված է, թե երկրագնդի բնակչության մեկ քառորդ մասը ստորագրել է Համաշխարհային Խորհրդի Դիմումը՝ հինգ մեծ տերությունների միջև խաղաղության Պակտ կնքելու մասին։*

*Հաղորդագրության մեջ ասված է, որ Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Դիմումին և աշխարհի բոլոր երկրներում անցկացվող այն կամպանիային համապատաս-*

*խան, որը պահանջում է հինգ մեծ տերությունների ներկայացուցիչների հանդիպումը՝ բոլոր պետությունների համար բաց խաղաղության Պակտ կնքելու նպատակով, արդեն հավաքվել է 562.083.383 ստորագրություն։ Ստացված և դեռ ոչ լրիվ տվյալներով, մինչև սույն թվի հոկտեմբերի 15-ը զանազան երկրներում հավաքվել են հետևյալ քանակությամբ ստորագրություններ.*

*Ալբանիա՝ 865.885, Ալժիր՝ 100.000, Արգենտինա՝ 1.500.000, Ավստրալիա՝ 67.425, Ավստրիա՝ 842.153, Բելգիա՝ 387.500, Բրազիլիա՝ 1.493.725, Բուլղարիա՝ 5.627.000, Բիրմա՝ 129.830, Կանադա՝ 270.000, Չիլի՝ 500.000, Չինաստան՝ 344.053.057, Կոլումբիա՝ 10.000, Կոստա-Րիկա՝ 34.000, Կուբա՝ 786.778, Կիպրոս՝ 103.824, Չեխոսլովակիա՝ 9.020.522, Դանիա՝ 124.724, Եգիպտոս՝ 22.000, Ֆինլանդիա՝ 525.000, Ֆրանսիա՝ 8.000.000, Գերմանիա (ժողովրդական հանրապետություն)...*

*ցումն Գերմանիայի վերառազմականացման դեմ և խաղաղության Պակտի համար)՝ 13.588.002, Մեծն Բրիտանիա՝ 833.342, Գվատեմալա՝ 65.073, Հունգարիա՝ 7.148.000, Հնդկաստան՝ 1.200.000, Ինդոնեզիա՝ 536.000 Իրաք՝ 12.000, Իրան՝ 1.920.000, Իսրայել՝ 201.337, Իտալիա՝ 14.353.842, Ճապոնիա՝ 5.693.301, Կորեա՝ 7.047.821, Լիբանան՝ 170.000, Մեքսիկա՝ 160.000, Մոնղոլիա՝ 633.877, Հոլանդիա՝ 282.532, Նոր Զելանդիա՝ 10.000, Նորվեգիա՝ 40.000, Պերու՝ 5.578, Լեհաստան՝ 18.053.000, Պորտուգալիա՝ 40.000, Պուերտո-Րիկո՝ 20.000, Ռումինիա՝ 11.060.141, Իսպանիա՝ 350.000, Շվեդիա՝ 248.580, Շվեյցարիա՝ 50.000, Սիրիա՝ 205.000, Թաիլանդ՝ 152.531, Անդրհորդանան՝ 12.000, Տրիեստ՝ 80.000, Թունիս՝ 100.000, Հարավ-Աֆրիկյան Միություն՝ 5.000, Ուրուգվայ՝ 215.000, ՍՍՌՄ՝ 96.729.946, Վենեցուելա՝ 36.000, Վյետնամ՝ 6.362.057։*

---

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

## ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

Հայ հնադարյան եկեղեցու ալեզարդ Հայրապետիս անունից ջերմագին ողջույններ ենք հղում Ամերիկահայ առաջադիմական միության և Ամերիկահայ երիտասարդական միության համագումարների մասնակիցներին:

Այսօր, երբ ամբողջ աշխարհը ալեկոծ վիճակ է ապրում, երբ բացարձակ մեծամասնություն կազմող բարի կամքի և մարդասեր հոգու տեր մարդիկ մտահոգված են աշխարհում խաղաղությունը տևական դարձնելու և պատերազմի վտանգը ընդմիշտ վերացնելու կենսական հարցերով, համոզված ենք, որ Ձեր համագումարներն ևս իրենց համեստ լուման կմուծեն խաղաղության համար պայքարող միլիոնավոր մարդկանց իղձն իրականացնելու վեհ ծրագրի մեջ:

Մաղթում ենք Ամենակարող Փրկչին, որ Ձեր համագումարների գործունեությունը հաջողությամբ ավարտվի և Ձեր առաջ դրված վեհ նպատակներն իրականացվեն ի բարօրություն համայն աշխարհի մարդկության:

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ–ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԳԵՈՐԳ Զ.

Ս. Էջմիածին,

31 օգոստոսի 1951 թ.

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Վ ե հ ա փ ա՛ ռ Տ ե ր,

Ամերիկահայ հառաջդիմական միության 14-րդ համագումարը հոտնկայս ունկնդրեց Ձերդ Վեհափառության ողջույնի հեռագիրը, որն ընդունելը բացառիկ պատիվ նկատեց: Բոլոր պատգամավորները որդիական անհուն սիրո բուռն զգացմունքներով խանդավառորեն ծափահարեցին Ձեր պատգամը:

Մեր կազմակերպության գլխավոր նպատակներեն մեկն է աշխատիլ խաղաղության համար: Հառաջդիմական միությունն ու «Լրաբեր» թերթը հավատարմորեն ծառայած են խաղաղության վսեմ նպատակին:

Որպես մեկ մասնիկ խաղաղասեր և ազնիվ ամերիկյան ժողովուրդին, մենք մեր համեստ բաժինը տված ենք խաղաղության համար թափված բոլոր ջանքերուն, որովհետև համոզված ենք, թե պատերազմը մահ և աղետ պիտի բերե համայն աշխարհին, մինչդեռ խաղաղությունը կյանք է, անհուն բարիք ու հառաջդիմություն ամբողջ մարդկության և հայ ժողովուրդին:

Ամերիկահայության հայրենասեր և առաջավոր տարրերը կանգնած են խաղաղության դատի կողքին: Մենք հպարտ ենք և երջանիկ, որ ներկա բախտորոշ շրջանին, Լուսավորչի Աթոռի վրա բազմած է կորովի, հառաջադեմ, հայրենասեր և հմուտ եկեղեցական մեծ ղեկավար մը՝ հանձին Ձեզ:

Ձեր հովվապետության բովանդակ շրջանին, Դուք ի հայտ բերիք հեռատեսություն, հնադարյան Հայ Եկեղեցիի դեմոկրատական և ազատատենչ սկզբունքները բոցավառ պահելու կամքը և համայն մարդկության մեջ իրական խաղաղություն հաստատելու վճռականությունը:

Ընդունեցեք մեր որդիական սերն ու ջերմ ողջույնները:

ՕԳՍԵՆ ՍԱՐՅԱՆ՝

**Ընդհանուր քարտուղար**
**Ամերիկահայ հառաջդիմական միության**
**կեդրոնական վարչության**

Նյու-Յորք,
Սեպտեմբեր 11, 1951.

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Վ ե հ ա փ ա՛ ռ Տ ե ր,

Ձեր ողջույնի հեռագիրը՝ ուղղված Ամերիկահայ երիտասարդական միության 17-րդ պատգամավորական ժողովին, որը գումարվեցավ Նյու-Յորք նահանգի Սիրագյուզ քաղաքին մեջ, ունկնդրվեցավ անհուն խանդավառությամբ:

Մենք մեր խորազգաց շնորհակալությունն ու երախտիքը կհայտնենք, որ մեզ արժանացուցիք Ձեր օրհնության և մաղթանքներուն:

Մեր կազմակերպությունը պիտի աշխատի ազգերու միջև բարի հարաբերության և աշխարհի մեջ տևական խաղաղություն հաստատելու ազնիվ նպատակին իրականացման համար:

Մենք պիտի սիրենք մեր կրոնքը և հպարտ ենք, որ Սուրբ Էջմիածնի Աթոռին վրա այսօր կբազմի Ձեզի պես հայրենասեր մեծ առաջնորդ մը, որ ոչ միայն հայ ժողովուրդի, այլ համայն մարդկության բարօրության համար կաղոթե ու խաղաղության կձգտի:

Որդիական սիրով՝

**Ամերիկահայ երիտասարդական միության**
**կեդրոնական վարչության**

**Ատենապետ՝** ԱՐՄԵՆ ՄԵՍՐՈՊՅԱՆ

**Ընդհանուր քարտուղար՝** ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նյու-Յորք,
Սեպտեմբեր 14, 1951.

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ՝ ԼԱՏՎԻԱԿԱՆ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՍՈՒՐԲ ՍԻՆՈԴԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԹԻՎ

ԳԵՐԱՇՆՈՐՀ ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

ՌԻԳԱ

Հոկտեմբերի 29-ին Լատվիական Ավետարանական Եկեղեցու Սրբազան Սինոդի հատուկ հանդիսավոր նիստի բացումն է, որ գումարվում է հանուն խաղաղության պաշտպանության և ազգերի բարեկամության: Ի սրտե ողջունում ենք քրիստոնեական կրոնի Մեծ Վարդապետի՝ Հիսուս Քրիստոսի խաղաղության դրոշի տակ գործող Սրբազան Սինոդիդ սուրբ ձեռնարկը: Հայցում ենք աստվածային օրհնությունը, որ սիրո, եղբայրության և խաղաղության ոգի ներշնչե համայն մարդկության, ի թիվս որոց՝ նաև Ձեր և Մեր հոտին և նոցա ղեկավարներին, ազատ պահե մարդկությունը պատերազմի վտանգից ու չարիքներից և առաջնորդե նորան ընթանալու համագործակցության ուղիով և կոփելու իր սուրբ և երջանիկ կյանքը:

Քրիստոսավանդ սիրո ողջունիվ՝

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԳԵՈՐԳ Զ.

## ԳԵՐԱՇՆՈՐՀ ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՊԱՏԱՍԽԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ

ԳԵՈՐԳ Զ. ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հոգևորականությունը և հազարավոր աղոթողները ակնածությամբ լսելով Ձեր քրիստոնեական սրտագին սիրով ու բարեկամությամբ առլցուն ողջույնը, գոհաբանական ջերմագին աղոթք վերառաքեցին Բարձրյալին՝ Ձերդ Վեհափառության և Ձեր գլխավորած բազմադարյան հնություն ունեցող և բազմաչարչար Հայոց Եկեղեցու համար: Մենք խորապես զգացված ենք աստ-

վածաշնչային Արարատ լեռան հովանու ներքո գտնվող հինավուրց եկեղեցու ալեզարդ, կյանքի փորձառությամբ իմաստնավորված. Սրբազնագույն Հոր բարեհաճ ուշադրության և մարդասիրության համար: Ժողովուրդներին եղբայրություն ազդարարող խաղաղության աղավնին թող թռչի այդտեղից դեպի բոլոր քրիստոնեական երկրները և մինչև մեր Հայրենիքը՝ Բալթիկ ծովի կապույտ ափերը:

Իմ ղեկավարած Ավետարանական Լյութերական եկեղեցու Գերագույն Խորհրդի նախագահության, նույնպես և էստոնական արքեպիսկոպոս Յան Կիյվիտի անունից խնդրում եմ Ձերդ Վեհափառությանը՝ ընդունել հաջողության և երկար կյանքի ցանկություններ:

Աղոթարար՝
ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

